

մեզ հետեւեալը: «Կուրանի չըջանը, որ բացի ուրիշ միջոցներից ամեն տարի մեծ քանակութեամբ արդիւնաբերում է բաւական լաւ յատկութեան ծխախոտ, անցեալ 1887 թ.ին ծխախոտի շատ նուազ հունձ ունեցաւ և այժմ եղածի վրա էլ համարեա պահանջ չը կայ: Այդ պատճառով ծը-խախոտի պլանտատորները այս տարի սիրտ չեն անում ծխախոտի ցանը սկսել: Մարտի 8-ից ար-դէն սկսվել է սոսնակաճաւը լեկատերիսողարում և ընդհանրապէս վերջրած առևտուրը գոհացուցիչ է: Մանաւանդ լաւ է ծախվում ասիական կո-շած ապրանքը:»

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒԱՐԻՑ մեզ գրում են մարտի 19-ից հետեւեալը: «Այստեղ կատարեալ դարուն է. սա-լորենին և դեղձենին արդէն ծաղկել են: Ռեօմիւրի ջերմաստիւթը արեւի տակ բարձրանում է մինչև 32 աստիճան, իսկ ստորեւում ցոյց է տալիս 18-ից աւելի: Քաղաքիս փողոցներում անտանելի թոյլ է բարձրանում անցողւոր՝ անող կառքերից: Ե-րեք շաբաթից աւելի անձրև չէ եկել, իսկ մեղա-նում դեռ ևս նոսրութիւն էլ չը կայ փողոցները ջրելու:»

Մարդը ճշմարիտ չէ կարող չը դարմանալ թիֆի-Սի քաղաքային վարչութեան տարօրինակ կարգա-դրութիւնների վրա: Ամեն բան միզանում թաւիս են անում. փողոցները կարծես դիտմամբ աւելում են ցերեկով, ժամը 11-ին, կամ 12-ին, երբ փո-ղոցները լի են անցողւոր՝ անողներով: Փո-ղոցներում աներևակայելի թոյլ է բարձրանում, որ աչքեր է կուրացնում և մարդու կողմից խեղ-դում: Շատ զեղեցիկ առողջապահական միջոց է... Միթէ մեր քաղաքային վարչութիւնը չէ հասկա-ցել մինչև այժմ որ դա շատ վնասակար է բնա-կիչների առողջութեան համար և միթէ չէ կարե-ւր փողոցները աւելի տալ զիշերը, կամ վաղ ա-ռաւօտան, երբ փողոցներում դեռ ևս անցող-ներ չը կան: Քանի անգամ մամուլը պէտք է կրկնի մի և նոյն ճշմարտութիւնը:

ԲԱՅՈՒԻՑ մեզ գրում են. «Այս օրերս այստեղի դատաստանական հիմնարկութիւններից մէկում վճռվեց մի հետաքրքիր գործ: Դա վերաբերում էր տեղացի բազմաթիւ թափառաւորների թուրք աղ-քատ կանանց, որոնք մեղադրվում են երկու բա-նում. առաջին՝ ողորմութիւն խնդրելու, և երկ-րորդ՝ անառակութեան մէջ: Բանից երևում է, որ դրանց պահում է եղել մի թուրք պառաւ, իբրև «անառակ կանանց», որոնք ցերեկով պարապում են եղել ողորմութիւն մուրալով, իսկ գիշերները անքաղաքականութեամբ: Առաջին գործի վերաբե-րութեամբ վճռված է նրանց նստեցնել ոստիկա-նատանը 10 օր և արգելել այսուհետև ողորմու-թիւն խնդրել, իսկ երկրորդ գործը յետաձգված է երկու ամիս ժամանակով:»

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսի կիրակեայ դպրոցի հայոց բաժնի աշակերտահիւնների թիւը այժմ հասնում է 13-ի:

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի վարչութիւնը, ինչպէս երևում է, նորից «արեւմտ» է գցել ու-սումնարանի համար նոր և յարմարաւոր շինու-թիւն կառուցանելու խնդիրը: Այն շինութիւնը, ուր այժմ գտնւում է դպրոցը, այնքան կար-կատվել է, որ այլ ևս որ և իցէ նոր և հիմնական մի վերանորոգութիւն անել անկարելի է. անկա-րելի է և այդ դրութեան մէջ պահել, որովհետև յիշաւի որ այդ շինութիւնը չէ համապատասխա-նում դպրոցական առողջապահութեան ամենա-փոքրիկ պահանջներին անգամ: Մենք չենք հաս-կանում թէ ինչպէս այդ դպրոցի ուսուցիչները և վարչութեան անդամները չեն խղճահարկում, տեսնելով թէ ինչպէս աշակերտները վտանգի են ենթարկւում իրանց առողջութիւնը այն մուկ, թողոտ և անպէտք սենեակների մէջ, որոնք կաղ-մում են հայոց ամենահարուստ դպրոցի դասա-տները: Եւ այդ վարչութիւնը փոխանակ ամենայն միջոց գործ դնելու որպէս զի դպրոցի շինութեան խնդիրը որքան կարելի է չուտով լուծվի, սկսել է դպրոցի այժմեան անպէտք շինութիւնը կարկա-տել և զեղեցիկացնել դրսից, որի համար անկաս-կած մի քանի հազար ծախս ցոյց կը տրվի: Որ-քան էլ դրսից զեղեցիկացնով այդ անպէտք շինու-թիւնը—որչինչ չի դուրս գալ, ուրեմն, ի դուր է Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը՝ կարծում թէ դրանով կարելի է ազատ մնալ հասարակու-

թեան արդարացի գանգատից:

Տեղական ուսուցիչ լրագրութեան մէջ այս օ-պէիս անագին ուշադրութեան է արժանացել Կէզէլիի և Դանիլովի գործը, որը ընկնում էր թիֆլիսի հաշտարար դատարաններից մէկում: Կէ-զէլի տեղական երկու ուսուցիչների նախկին աշխատակիցն է, իսկ Դանիլով երկրորդում վար-չութեան նաւատարմատարի պաշտօնն է վարում: Այդ երկու պարոնները իրանց մէջ անձնական հաշիւները հրապարակ դուրս բերեցին և լրա-գրութեան նիւթ դարձրին, և վերջը գործը այն-տեղ հասաւ, որ Կէզէլի կամենալով վրէժխնդր-ւիլ, ներկայ թաւակների յունվարի 21-ին, թիֆլիսի դատարանական թատրոնում, հասարակութեան ներկայութեամբ խից Դանիլովին,— և գործը լրագրութիւնից անցաւ դատարան: Մի քանի ան-գամ յետաձգվելուց և ձգձգվելուց յետոյ, վերջա-պէս այդ գործը քննվեցաւ մարտի 23-ին թիֆլի-սի երկրորդ բաժնի հաշտարար դատարանում, և այդ վճռի համաձայն, Կէզէլի դատաւարական երկու տնայալ բանտարկութեան: Մենք միանգա-մայն աւելորդ ենք համարում մտնել այդ ինքն ըստ ինքեան ուշադրութեան ոչ արժանի գործի մանրամասնութիւնների մէջ. քանի որ ամբողջ գործի հիմքը և աղբիւրը կազմում են մի քանի անձանց նաւատարմատարի հաշիւները, և այն ինտրիգա-նները, որոնցով, ինչպէս երևում է, շատ հարուստ է թիֆլիսի հասարակութեան այն մասը, որին պատկանում են Կէզէլի, Դանիլով և դրանց նը-մանները: Մենք միայն դարմանում ենք, թէ ինչ-պէս թիֆլիսի ուսուցիչներից մի քանիսը ան-դադար ցցում են իրանց էջերը այդ գործի վե-րաբերեալ այնպիսի մանրամասնութիւններով, ո-րոնք ոչ թէ ընթերցող հասարակութեանը մի օ-ղուտ չեն կարող տալ, որոնք ոչ թէ չեն նպաս-տի այս կամ այն հարցի պարզաբանում, ինչպէս կարծում են ոմանք, այլ միայն կապացուցա-նեն, թէ ինչպէս շատ անգամ լրագրութիւնը ի-րան թող է տալիս այնպիսի հարցերով զրադվե-լու, որոնք միայն թիֆլիսի բուլվարներում հետա-քրքիր կարող են լինել, որոնք կարող են ինտրի-գամբ մարդկանց միայն դրաւել, կամ շատ շատ կարող են հետաքրքրել նրանց, որոնք ծանօթ են այդպիսի գործերի հերոսներին:

Ստացանք ԱՍՏՐԱԽԱՆԻՑ Թարութիւն Լազա-րեանից 11 բուլի յօդուտ գէյթունների, որ պարուն հաւաքել է իր բարեկամներից: Նախկին 211 ր. գումարի հետ այժմ կունենանք մեր իւր-բազրատանը յօդուտ 252թուի հրկիւնների ըն-դամներ 222 բուլի:

Ս. Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն յայտարարում է հետեւեալը. այն անձինք, որոնք կամենում են դիմաւորանների կամ ընկալական դպրոցների դասընթացի վերջնա-կան ընթացիկում տալ, պէտք է Պետերբուրգի ու-սումնարանական շրջանի հոգաբարձուի անունով խնդրել մատուցանեն, ներկայացնելով դրա հետ միասին 1) իրանց համառօտ կենսագրութիւնը, նոյն իսկ իրանց ձեռքով գրած, 2) վկայական հաստատ և կոչման մասին, 3) վկայական այն դպրոցական հաստատութիւնից, որի մէջ իրանք ուսում են ստացել, 4) տեղեկութիւններ իրանց ծնողների ընտանեկան տեղի մասին, 5) իրանց լուսնակար պատկերը և 6) տասն բուլի յօդուտ ընդունելու խնդրագրով ներկայացրած փողը ոչ մի դէպքում չի վերադարձնվի խնդրողները կըն-դունվեն մինչև ապրիլի 10-ը:

Մարտի 28-ին, քաղաքային դումայում ի միջի այլոց պէտք է ընկնի ուսումնական յանձնաժողով-ի մի ղեկուցումը, հասակաւորների համար կի-րակեայ դպրոց բանալու մասին: Պէտք է սպա-սել, որ դուման բարեխղճութեամբ կը վերաբերվի այդ հարցին:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են հե-տեւեալը. ներքին գործերի մինիստրութիւնը կար-գադրեց, որ Մոսկվայի և Պետերբուրգի ձրի ըն-թերցարանների նմանութեամբ դասադաս քաղաք-ներում հիմնվող ձրի ընթերցարաններում, ուր յաճախում են մեծ մասամբ արհեստաւորներ և միջնակարգ դպրոցների աշակերտներ, թույլատր-վեն միմյան այն զրգերը և պարբերական հա-տարակութիւնները, որոնք հաւանութիւն գտած կը լինեն ժողովրդական մինիստրութեան ուսում-

նական մասնաժողովի կողմից:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ յայտնել, որ շաբաթ-օր, մարտի 26-ին, երեկոյեան 7 1/2 ժամին կայա-նալու է ընկերութեան ընդհանուր ժողովը: Հե-թական գործերը վերջացնելուց յետոյ, ժողովը կը լսի պ. Էնֆիլանտեանի ղեկուցումը «Եւրասիա-տագործութեան մասին»: Ներկայ կարող են լի-նել և կողմնակի անձինք:

Այս տարի, ինչպէս գրում են մայրաքաղա-քի լրագրիները, Կովկաս պէտք է գալ Ֆրանսիա-ցի նկարչուհի Լուիզա Գէրլէ, և այստեղից պէտք անցնէ Պարսկաստան:

Հինգշաբթի, մարտի 24-ին, կայացաւ Արտիս-տական ակումբի անդամների ընդհանուր ժողովը: Փննվում էր իշխան կառավարչապետի առաջարկութիւնը, այն է ընդունել թիֆլիսի օ-պերան ակումբի անօրինութեան ներքոյ, ստանա-լով 35 հազար բուլի կառավարչական սուբսի-դիա: Երկար վիճաբանութիւններից յետոյ այդ ա-ռաջարկութիւնը ընդունվեցաւ այն պայմանով միայն, որ այժմեան գերեզմանի գերաստաններից շատերի հետ կապած պայմանագրեր անվաւեր համարվի, իսկ եթէ այդ չէ կարելի այն ժամա-նակ տուրքիդա պահանջել 54 հազար բուլի: Այնուհետև ընկնելու ակումբի բնակարանի հար-ցը. վճարվեցաւ վեց տարով վարձը Ստարո-Վնստի-տուտեան փողոցի վրա գտնվող կայանապահների տունը, տարեկան 2,000 բուլիով: Այդ տանը կից է պ. Եսաի ֆիլթոյեանի տունը Պ. ֆիլթոյեան հա-մաձայնվեց իր տան մէջ գտնվող թատրոնական դահլիճը առանձին անցքով միացնել ակումբի բնակարանի հետ, միայն այն պայմանով, որ դահլիճը գտնվի ակումբի տնօրինութեան ներքոյ միայն չաբաթը չորս անգամ:

Անցեալ համարի մէջ Սալիանի ձկնորսութեան կապալի մասին հաղորդած լուրի մէջ մի սխալ մտաւ: Գլխաւոր «Բալովսկի» անուանված բաժնի կապալը մնաց պ. Ա. ֆիլթոյեանի վրա 333 հա-զար բուլիով: Ի դէպ կարող ենք հաղորդել, որ ձկնորսութեան միւս մեծ մասը «Բաթի-պրո-միս» կոչվածը, մնաց պ. Լիանոզովի վրա 110 հազար բուլիով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՐՁԱՎԱՆ ԱՊՈԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՍԻՍԵՄԱՆ

Մինչդեռ Եւրոպայի գանազան կողմերում յարուցված դիպլոմատական հարցերը կլանել են համարեա ամբողջապէս թէ հասարակաց և թէ մամուլի ուշադրութիւնը, Անգլիայում առաջ է գնում մի վերին աստիճանի նշանաւոր բեֆօրմա-յի գործը, որը արդէն այս ամիս սկզբից դրաւել է Մեծ-Բրիտանիայի բոլոր գործիչների առանձին ուշադրութիւնը: Այդ բեֆօրման, որի հեղինակը գլխաւորապէս լուր Սալլերի և իր մինիստրու-թիւնն է, և որը արդէն ներկայացրած է հա-մայնների ժողովում, մի ահագին յեղափոխու-թիւն պէտք է զգի Անգլիայի ներքին վարչու-թեան մէջ, ահագին ենք ասում, որովհետև վարչական ապակե տրօնացման սխա-տեման Եւրոպայի ոչ մի երկրում այնպէս չէ գործադրված մինչև այժմ, ինչպէս այդ պէտք է գործադրվի Անգլիայում, Սալլերիի մինիստրու-թեան կազմած նախագծի շնորհով:

Տեղական ինքնավարութեան հարցը վաղուց յարուցված է Անգլիայում. ինքն ժողովուրդը շատ անգամ արտայայտել է, որ ցանկանում է որքան կարելի է լայնացնել տեղական ինքնավա-րութեան գործը: Ժողովուրդի այդ ցանկութեանը շատ անգամ խոստացել է լիութիւն տալ ազա-տամիտ մինիստրութիւնը, բայց գործ ա դ ռ ու-թ իւ ռ միշտ ուշանում էր, քանի որ այդ հար-ցը այնքան բարդ է, և այնպէս դժուր կը լուծվի չօչափում է թէ մասնաւոր անձանց, թէ հա-մայնների և թէ պետութեան շահերը, որ հեշ-տութեամբ դուրս բերել դժուար էր: Պահպանու-ղական մինիստրութիւնը արդէն մշակել է տեղա-կան այդ ինքնավարութեան նախագիծը, և մար-տի 7/19-ին նախագիծ հարցը դրվեցաւ համայն-ների ժողովի առջև:

Այդ նախագիծը մեծ փոփոխութիւն է մտ-

նում անգլիական վարչական այժմեան սխտեմա-յի մէջ. նա աշխատում է ուժեղացնել տեղական ինքնավարութեան և թուլացնել կառավարու-թեան ու պարլամենտի իրաւասութիւնը տեղա-կան գործերի վերաբերմամբ: Այդ նոր բեֆօր-մայի նախագիծը զորութեամբ կազմվում են տե-ղական, գաւառական և նահանգական խո-րհրդեր, որոնք կը գործադրվի ամենայն ճշը-գութեամբ, քանի որ կանաք ևս կունենան տղա-մարդկանց հաւասար ընտրողական իրաւունք: Մի շաբթ բուն վարչական հարցեր, որոնք մինչև այ-ժմ գտնվում էին կառավարութեան և պարլա-մենտի իրաւասութեան սահմաններում, կը յան-ձնվեն այդ խորհուրդներին: Տեղական ինքնավա-րութեան օրգանները՝ պէտք է հաւաքեն տեղա-կան հարկերը, նրանք պէտք է ծախսեն այդ հարկերը, առանց կառավարութեան և պար-լամենտի միջամտութեան: Տեղական ինքնավա-րութեանը մեծ իրաւունքներ է տրվում և հա-ղորդական կը լինի ևս ճանապարհների վերաբերութեամբ: Նոյնպիսի մեծ իրաւունքներ են տրվում տեղական ինքնավարութեան օրգաններին թէ դպրոցական գործերի, թէ հասարա-կական աշխատանքների, թէ առողջա-պահական խնդիրների, թէ խմիչքների հարցի, և թէ ուրիշ շատ թէ քիչ նշանաւոր տե-ղական գործերի վերաբերութեամբ: Եւ այդ տե-ղական ինքնավարութեան գործադրական մար-մինները կատարեալ իրաւունք կունենան փակել խմիչք վաճառող տները, անկի կամ պակաս տուրք դնել դրանց վրա և այլն: Այդ դեռ բաւական չէ. օստիկանութիւնը ենթարկվում է տեղական ինք-նավարութեան օրգաններին, այնպէս որ օստի-կանութիւնը իսկապէս անմիջական կախում կու-նենայ ժողովուրդից:

Դրանից արդէն երևում է, թէ ինչ արմատական փոփոխութիւններ է մտցնում այդ նոր բեֆօրման անգլիական վարչական այժմեան սխտեմայի մէջ, և թէ որքան սահմանափակում է վարչական կեն-տրոնացումը ուղղութիւնը, ոյժ տալով ապակիւ-տրոնացման, այսինքն՝ տեղական ինքնավարու-թեան սխտեմային:

Այդ ազատամիտ բեֆօրման, լայն սկզբունքնե-րի վրա հիմնված այդ նախագիծը արդէն ներկա-յացրած է, ինչպէս ասացինք, համայնների ժո-ղովին, և անկասկած կը լինի անգլիական պար-լամենտի ներկայ նստաշրջանի ամենադիւսաւոր զբաղմունքի նիւթը: Ամենքն էլ հետաքրքրու-թեամբ հետեւում են այդ ուշադրութեան արժանի բեֆօրմայի ընթացքին, որը անկասկած մի նոր դարադրուկ կը կազմի Մեծ-Բրիտանիայի ներքին կեանքի մէջ, և որը պատիւ է բերում Սալլերիի պահպանողական մինիստրութեանը: Այդ պահպա-նողական բառը արդէն բաւական է գտնանք պատճառելու ընթերցողին, թէ ինչպէս եղաւ, որ Սալլերիի այժմեան մինիստրութիւնը, որ այնքան պահպանողական և խաւարամիտ է շատ հարցե-րում, մասնաւոր իրաւունքական հարցում, այժմ այդպիսի աչքի ընկնող ազատամիտ ուղղութեամբ պաշտպանում է տեղական ինքնավարութեան ճշմարիտ որ ազատամիտ սխտեման:

Այդ հարցին պատասխանելու համար առ այժմ չը կան ձիւղ տեղեկութիւններ մեր ձեռքի տակ, այնպէս որ մի քանի ենթադրութիւններ կարելի է միայն անել: Գուցէ Սալլերիի մինիստրութիւնը այժմ չէ ուղում հետեւի նախկին քաղաքականու-թեան, գուցէ Սալլերիի կուսակցութիւնը հա-մողվեցաւ ազատամիտ ուղղութեան օգտուէտու-թեան մէջ,—ինչպէս ենթադրում են շատ լրա-գրիներ: Բայց Լոնդոնից եկած տեղեկութիւն-ները Սալլերիի այդ դարմանալի փոփոխութեան մի ուրիշ բացատրութիւն էլ են տալիս: Յայտ-նի է ամենքին, թէ ինչ քաղաքականութեան է հետեւում այժմեան մինիստրութիւնը իրանդա-կան և արեւելեան հարցերում, այդ քաղաքակա-նութիւնը շատ էլ դուր չէ դալիս անգլիական ազգի մեծամասնութեան, և ոչ թէ միայն դուր չէ դալիս, այլ այդ անհամակերպ քաղաքականութեան շնորհով Սալլերիի մինիստրութիւնը կարող է ընկնել Սալիայի այդ անկանոն առաջին առնելու համար, և վերոյիշեալ երկու հարցերում՝ իրան-դական և արեւելեան հարցերում աջութիւն ու-նենալու համար Սալլերիի մինիստրութիւնը կա-մենում է ձեռք բերել ազգի և ընտրողների հա-մակցութիւնը՝ ներքին ինքնավարութեան վերա-

բերեալ ազատամարտ ընթացիկներով, որոնց վա-
ղուց ձգտում են Մեծ-Բրիտանիայում:

Իսկ որ այդ ընթացիկները համար այժմեան մի-
նիստրութիւնը արժանի է անդիլակաւ ազգի շը-
նորակալութեան—դա, ի հարկէ, անկասկածելի է:

ՖԻՆԱՆՍԻ ԿԱՑՄԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԱՐ-
ՄՈՒՆԻԲԸ

Լրագիրները հաղորդում են, որ գերմանական
կայսրը Բեռլին դաւով, պրոտական (Ս) արժու-
պատանշանը առաջին աստիճանի չնորհել է մի-
միայն երեք անձանց՝ իր կնոջը (կայսրուհի Վիկ-
տորիային), արքայազատութեան մինիստր Ֆրեդ-
րիքին և առևտրի մինիստր Մայքալին: Արդա-
բարաւորութեան մինիստրին այդ պատանշանի
տալը նրանով է բացատրւում, որ Ֆրեդրիքը զեռ-
այն ժամանակ, երբ Ֆրեդրիքին կայսրը Սան-Ռեմո-
յում էր, սաստիկ ընդդիմացաւ իշխան Բիսմար-
կի առաջարկութեանը հանգուցեալ կայսրի հի-
ւանդութեան առիթով Վիկտորիային ինսա-
մակալ յայտնելու: Ֆրեդրիքը յայտնեց թէ որպէս
արդարադատութեան մինիստր, ինքն պարտաւոր
է պաշտպան հանդիսանալ երկրի օրէնքներին և
սահմանադրութեանը, իսկ Պրոքսիայի սահմանա-
դրութեան դրոշմութեամբ՝ քանի որ թագաժառան-
գը կենդանի է և նրա հիւանդութիւնը հոգեկան
հիւանդութիւն է, իրաւունք չը կայ մի ուրիշ որ
և է ինստիտուտ նշանակելու: Թագաժառանգի
կենդանութեան ժամանակ կարելի է սահմանա-
դրութեան դրոշմութեամբ նշանակել ինստիտուտ մի-
այն այն դէպքում, երբ թագաժառանգը հոգեպէս
հիւանդ է, այսինքն խելագար է, ինչպէս այդ
տեղի է ունեցել Բալթիկում, որտեղ թագաւորը
խելագար է, և այդ պատճառով երկրի ինստի-
տուտ է նշանակել է նրա հօրեղայրը:

Մինիստր Ֆրեդրիքը յաղթող հանդիսացաւ և
իշխան Բիսմարկի ստիպմանը զիջեցնել ու յետ ա-
ռաւ իր առաջարկութիւնը: Կայսրը չնորհելով
արդարադատութեան մինիստրին պատանշանը,
վարձատրեց նրան, որպէս սահմանադրութեան
հաւատարմի աշխատակցին:

Ֆրեդրիքը ընդդիմանալով Բիսմարկի առաջար-
կութեանը, չը նայելով որ հանգուցեալ Վիկտորի-
ային կայսրը զեռ ևս կենդանի էր այն ժամանակ,
վերջապէս իր խօսքերը ասելով՝ սահմանա-
դրութեան դրոշմութեամբ, մինչև որ թագաժառան-
գը կենդանի է ու հոգեպէս հիւանդ է, ոչ ոք
իրաւունք չունի նրա փոխարէն ինստիտուտ նշա-
նակել: Ինչպէս Բիսմարկ, ոչ պարզապէս, ոչ
էլ ինքն կայսրը:

ՅԵՏԱԴԵՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱ-
ՅՈՒՄ

Հէնց այն օրից, երբ հրատարակվեցան Ֆրեդ-
րիքին կայսրի նշանաւոր մանիֆէստը և պատգա-
մագիրը՝ համարեալ գերմանական ամբողջ կիսա-
պաշտօնական լրագրութիւնը, որը գտնուում էր
անցկալ թագաւորութեան ժամանակ կառավար-
չական գործերի գլխին կանգնած յետագոյն-պահ-
պանողական կուսակցութեան տրամադրութեան
ներքոյ, և դրա հետ միասին այդ կուսակցու-
թեան բոլոր ներկայացուցիչները մի բաւական
կատարել կուր են սկսել նոր կայսրի ուղղու-
թեան և նրան համակողմ կուսակցութեան դէմ
ցնտարելով կուսակցութիւնը, ինչպէս միշտ և ա-
մեն տեղ, դիմում է ամեն տեսակ անապահ մի-
ջողներին՝ հասարակական կարծիքը պղտորելու
համար: Պահպանողական կուսակցութեան շատ
օրդաններ մինչև այժմ աշխատում էին հաւա-
տացնել գերմանացիներին, որ Ֆրեդրիքին կայսրը
այնքան ծանր հիւանդ է, որ երկար ապրել չէ
կարող, ուրեմն և նրա ընթացիկական ձգտումները
որ և իցէ արդիւնք չեն ունենայ: Բայց այդ բա-
նը նրանց չափովն էր: Նոր կայսրը օրից որ աւելի
տոկոսութիւն և ոյժ է ցոյց տալիս,— և ահա
այդ օրդանները սկսել են փոխել իրանց ընթաց-
քը, և ամեն միջոց գործ են դնում՝ նախ ողոր-
դելու գերմանացիներին Վիկտորիային կայսրութեան
յիշատակով, և ապա համադրելու նոր գերմանա-
ցիներին, որ Ֆրեդրիքին իր ընթացքով միանգա-
մայն հակառակ է հօր ընթացքին, և այնպիսի
ուղղութիւն է ուղղում տալ Գերմանիայի թագա-
ւորութեան, որի հետևանքը պէտք է լինի
այդ գործի պետութեան թուլանալը, կամ ուրիշ
խօսքերով, դրա հետևանքը այն պիտի լինի, որ
Գերմանիայի թշնամիները պէտք է սկսեն իրանց
զուլալ բարձրացնել իրանց միտքը ապացուցա-

նելու համար գերմանական յետագոյն-
նորական կուսակցութեան օրդանները և ներկա-
յացուցիչները մատնանել են անուամբ այն իրողու-
թեան վրա, թէ ինչպէս, օրինակ, Ֆրանսիայում
մեծ համակրութեամբ են վերաբերում դէպի նոր
կայսրը, և ուրախանում են, որ վերջապէս Բիս-
մարկի կամայականութեան վերջ կը տրվի, այդպի-
սի միջոցներով են ուղղում նոր և ազատամիտ
կայսրի հակառակորդները հասնել իրանց նպա-
տակին, և արդեւ դենդ ազատամիտ և առաջա-
դիմական կուսակցութիւններին առաջ, որոնք այ-
ժմ ասպարէզ են գալիս, և պատրաստուել են
ջերմ կերպով պաշտպանելու Ֆրեդրիքին ուղղու-
թիւնը: Գնտադրմականները ազատամիտ և առա-
ջադէմ կուսակցութեան դէմ էլ ամեն միջոց գործ
են դնում՝ որպէս զի թուականներն նրանց գործու-
նէութիւնը, յետագիմականները հայտնում են նը-
րանց, կասկածել են տալիս նրանց զանազան
հակա-պետական ձգտումներին մէջ, ուղղում են
հաւատացնել, որ նրանք ձգտում են ոչնչացնել
Գերմանիայի միութիւնը և առաջ բերել հանրա-
պետական կառավարութիւն:

Այդ ամբողջ արշաւանքը յետագիմականներին
կողմից, ի հարկէ, չէ կարող փոխել գործերի ըն-
թացքը, այլ միմիայն դուցէ մի փոքր խանգար-
մունք կը պատճառի երկրի ներքին թագաւորու-
թեան հանգուցեալութեանը: Գերմանիայի նոր կայսրը ներ-
կայումս հանդիսանում է միմիայն իբրև աշակից
այն ուղղութեան, որը չէր կարող երկար ժամա-
նակ խելագար և անշարժ մնալ: Հանգուցեալների
չնորհով այդ ուղղութիւնը անցեալ թագաւորու-
թեան ժամանակ ճնշված էր, իսկ այժմ նրան
պէտք է հետեւն պետութեան գործերի գլխաւոր
ղեկավարները:

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՆԻՔԻԱՅՈՒՆ

Կ. Պոլսի, 16 մարտի

Մարտի 14-ի թղթակցութիւն իսրկած է թղթ-
թատուն, թէպէտև յաջորդ օրը պիտի մեկնէր
թղթատարը, բայց մի օր հանգիստ ընելու համար
չուզեցի երէկ Պոլսի իջնել, այս առաւօտ կիջնեմ
և կը լսեմ հետեւեալ տեղեկութիւններն, զոր կա-
տարելապէս ստուգելու համար ժամանակ կը
պահուի. թղթատարը մեկնելու կէս ժամ կայ:

Աղգ. Ժողովք պիտի գումարուի մարտ 18-ին,
այս ստոյգ է. հրապարակները երէկ ցրուած են,
բայց Պատրիարքի հրաժարականը պիտի ընդու-
նուի թէ ոչ: Առանձնաշնորհմանց խնդրել նոր
կերպարանք մը առած է, որոյ մասին տակաւին
համաձայնութիւն գոյացնելու ժամանակ չը կայ:
Պատրիարքը երկուշաբթի օր մեծ եպարքոսին
գնաց, եպարքոսը Պատրիարքին հաղորդած է թէ՝
նախարարութիւնը իւր որոշումը չը փոխէր
առանձնաշնորհման մասին. ինչպէս զիտե՞ր նա-
խարարութեան որոշումն անպատշաճ է քրիստո-
նէից. թէ Արեֆի փաշայի նախազանգութեամբ
կազմուած յանձնաժողովը, թէ պետական խոր-
հուրդը քրիստոնէից նպատակաւ կարծիք յայտ-
նած էին:

Այս յայտարարութեան վրայ Պատրիարքը կը
յայտարարէ թէ իւր հրաժարականը, որ արդէն
տուած էր այս խնդրոյ առթիւ վերադառնալու կը կրի-
նէ:

Այժմ պէտք է ընդունել Պատրիարքին հրաժա-
րականը թէ ոչ, քանի որ ազգային իրաւանց ի
պաշտպանութիւն հրաժարական կուտայ պէտք է
մերժել այդ հրաժարականը: Կը կարծենք թէ որ-
քան ալ Պատրիարքն ի պաշտպանութիւն ազգա-
յին իրաւանց կը հրաժարի, բայց և այնպէս այդ
իրաւունքներն պաշտպանելու եղանակը չը գիտէր,
կամ լրջապէս չէր խնդրոյն պատճառաւ չուզէր
շատ զօրաւոր պաշտպանութիւն մը ընել. հետեւա-
բար աւելի կարող և անկախ Պատրիարքի մը
պէտքն անհրաժեշտ է:—Տեսնենք ուրբաթ ինչ
պիտի լինի:

Երէկ պ. Ստեփան ֆալիպպեան հանրածանօթ
երեսփոխանն յանկարծ կաթուածահար կըլլայ.
կենքը վտանգի մէջ է: Այս առաւօտ կըսուէր
թէ արդէն վտանգանա՞ծ է: Եթէ վախճանած ալ չէ,
արդէն լնցած է:

Կիրակի օր Սրբաձայնեանց եպիսկոպոսն այս-
տեղ հասաւ: Կերեի թէ ռուսաց աշխարհադա-
կան ընկերութեան անդամ ընտրուին զինքը կա-
կածանաց հնթարկած է յայն օտմանեան կառա-
վարութեան, որ այս առթիւ ուղարկութիւն դար-
ձուցած է եպիսկոպոսին նախորդ հրատարակու-

թեանց մասին ալ, և այս պատճառներով եպիսկո-
պոսին Պոլսի գալն հարկ դառնում է:

Հայկակ

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—Իշխան Բիսմարկ, ինչպէս հեռագրում են
Բեռլինից, ներկայացրեց նոր կայսրին արտաքին
քաղաքականութեան վերաբերեալ մի ընդհանուր
պրօքրամ: Կայսրը յայտնեց, որ համաձայն է
այդ պրօքրամին հետ:

—Վիէնայում, մինիստրական խորհուրդը մը-
շակեց նոր ղեկավարական կանոնադրութիւն
Աստրո-Ունգարիայի համար:

—Ֆրեդրիքին կայսրը հրամայել է պարզ ձև
տալ զինուորների հագուստին և զինուորական,
և որքան կարելի է հեշտացնել նորակոչներին զի-
նավարութիւնը:

—Վիէնայից հեռագրում են, որ իբրև թէ
Ֆրանց-Յովսէֆի կայսրը մտադիր է գարնանը Անգ-
լիա գնալ:

—Ֆրեդրիքին կայսրի առողջութեան մասին դա-
նազան լուրեր են գալիս: Բեռլինից եկած տեղե-
կութիւնները ցոյց են տալիս որ կայսրի առող-
ջութիւնը լաւանում է, իսկ Վիէնայից գրում
են, որ այնտեղ ստացված լուրերը ընդհանրապէս
ապացուցանում են, որ Ֆրեդրիքին առողջութիւնը
վտանգաւոր դրութեան մէջ է:

—Բուխարէստից հեռագրում են, որ վերջին
խառնակութիւնները ժամանակ, ընդմիջողական
կուսակցութիւնն անդամները փորձ փորձեցին
յարձակվել պալատի վրա, բայց ոստիկանութիւ-
նը և զօրքը փակեցին այն բոլոր ճանապարհները,
որոնք տանում են դէպի պալատը:

—Բուխարական հարցի վերաբերութեամբ ոչինչ
նոր բան տեղի չէ ունեցել պետութիւնների մէջ:
Սօֆիայում անցել է առաջվայ տաքնապը, և Կո-
նուրգեան օրինակ վիէնա չէ գալու: Կառավար-
ութիւնը այժմ զբաղված է միմիայն նոր փոխա-
ւորութեան հարցով:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եփրատ նշանաւոր գետը, ինչպէս երևում է
Եփրատի ճանապարհորդների տուած տեղեկու-
թիւններից, շատ փոքրացել է, և նրա ջուրը տա-
րուց տարի զգալի կերպով պակասում է, և այժ-
մեան Եփրատը շատ քիչ նմանութիւն ունի պատ-
մական անապին Եփրատին հետ: Այդ երեւմն շատ
մեծ գետի ջրի պակասելու պատճառը այն է, որ
նրա ակունքներին մօտ գտնվող անտառները ան-
խնայ կերպով ոչնչացվել են և այդ պատճա-
ռով ջրի աղբիւրները նուազել են:

Ֆրանսիական մի քանի լրագիրներում տըպ-
ված է հետեւեալ լուրը, որը մասամբ և հեղա-
կան բնութագրութիւն ունի. «Ֆրանսիական կառա-
վարութիւնը, որը ջերմ կերպով աշխատում է
մարդաբանական դարձնել իր գաղթական երկիրները,
ներքոյ յայտարարել էր այն մասին, որ Նուրի
մօտ գտնվող կղզում, ուր ապրում են ֆրանսիա-
ցիներ, հարկաւոր է 200 հարմանացու. և որ այդ
հարմանացուներին տեղ հասցնելու ծախսը կառա-
վարութիւնը յանձն է առնում: Կարճ միջոցում
գտնվեցան 100 ջահի ֆրանսուհիներ, իբրև
հարմանացուներ գաղթականների համար:

Նիւ-Եթովպիայի հիմնվեցաւ «Կանանց կոլոն», ո-
րի նպատակն է առաջիկայ ընտրութիւնների ժա-
մանակ պրօպագանդա անել այժմեան նախագահ
Կլէմէնտիէի ընտրութեան դէմ:

Կ. Պոլսում սկսեց հրատարակվել մի նոր կրօ-
նական և աստուածաբանական շաբաթաթիւթթ
«Եկեղեցի Հայաստանայ» վերնադրով:

Յունաց թագաժառանգ իշխան իր Բեռլինում
եղած ժամանակ նշանաւորվեցաւ գերմանացոյ
այժմեան կայսր Ֆրեդրիքին երրորդ աղջկայ՝ Սո-
ֆիայի հետ: Այդ նշանաւորութեան մասին պաշ-
տօնապէս պետ է յայտնված: Փետրուար 20 տա-
րեկան է, իսկ հարմանացու 18 տարեկան:

«Արևելքի» մէջ կարգում ենք. «Ֆրանսիական
Մէսաթիւր ընկերութեան Գ. ռոնայ շոգնաւան,
մարտի 10-ին որ Պոլսոյ նաւահանգիստէն կը
մեկնէր Մարսելիս, Գրէ Գուրդին առջևէն ան-
ցած պահուն զլլու կողմէն բաղնեցաւ անգլիա-
կան շոգնաւան մը, որ այնտեղ երկաթ նետած
էր. Գ. ռոնայ սկսաւ զլլաւ կողմէն ջուր առնուլ,
այնպէս որ սուղ միջոցի մէջ ջուրն ամենայն ա-
րագութեամբ բարձրացաւ: Նաւապետը մտաց
արթնութիւնը չը կորսնցնելով, շոգնաւան Հարէմ
խկէլէսին առջև ուղղեց և անշուտ առաջի վրայ
նստեցուց որպէս զի չընկղմվի Ուղիորդ որը հա-
րիւր քանի չափ էին, հալիւ կրքան իրենց
կենանքն ազատել: Սոքա նաւահանգիստի վարչու-

թեան կողմէ զրկուած շոգնաւաններով և մա-
կոյներով ցամաք փոխադրուեցան: Այս արկածը
մարդու կորուստ պատճառած չէ բնաւ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մարտի: Հրատարակված է
պետական խորհրդի վճիռը Մօսկվայի խնայողա-
կան գանձարանը փակելու մասին: Հրատարակ-
ված է «Մօսկվա» ապառնկողական ընկերու-
թեան կանոնադրութիւնը. հիմնական դրամադու-
լը մի միլիոն ռուբլի է. ընկերութեան վարչու-
թիւնը Մօսկվայում կը լինի:

ԲՈՒԽԱՐԵՍ, 23 մարտի: Մինիստր-Նախագահ
Բոգէտովի կարգաց պատգամաւորների ժողովում
մինիստրական յայտագիրը, նրա զլլաւոր էութիւ-
նը՝ բիւզէտի հարցն է: Նիստը աղմկալի էր:

ՓԱՐԻՋ, 23 մարտի: Նոր մինիստրութիւնը ժո-
ղովում կարգացած յայտագրի մէջ այն միտքն է
յայտնում, որ սահմանադրութեան վերաբնու-
թեան համար պէտք է սպասել աւելի բարեպա-
տեհ ժամանակի, և խոստանում է մի շարք այն-
պիսի օրինադրեր, որոնք համապատասխան կը
լինեն դէմօկրատիական պահանջներին, այն է՝
ասօցիացիայի, դատաւարութեան, եկեղեցական
գործերի վերաբերեալ օրէնքները, և զլլաւորը՝
բիւզէտի հարցերը:

ՓԱՐԻՋ, 23 մարտի: Ջինուրական մինիստր
Ֆրէյսին զլլաւոր շտաբի կառավարիչ ընտրեց
գեներալ Վարենէին: Պատգամաւորների ժողովի
նախագահ ընտրվեցաւ Մէլին, որը նոյնքան ձայ-
ներ ստացաւ, որքան և Կլեմանսօ, բայց որը ա-
ռաւելութիւն ունի հաստիկ կողմից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մարտի: Զօրաբանակի և նա-
ւատորմի զլլաւոր բանայայ նշանակված է ա-
ւազ քահանայ Ժեւաքովսկի: Պետերբուրգի նահա-
գական դատարանը, ընկելով մէջանին Լապին-
տիւի գործը, որը ձգտում է եղել իր մօրը գծա-
տուն գետեղելու նրա հարստութիւնը օգտվելու
համար, այլ և այդ գործը առաջ տանելը յանձն
առնող երդուեալ հաւատարմատար իվանովսկու
և բժիշկ Կրասնիկովի գործը, որը սուտ վկայա-
գրեր է տուել խելագարութեան մասին,—վճեց՝
Իվանովսկուն և Կրասնիկովին աքսորել Տօմսկի
նահանգը, իսկ Լապինտիւիին գետեղել բանտար-
կանների խմբի մէջ 4 տարով:

ՓԱՐԻՋ, 24 մարտի: Պատգամաւորների ժողովի
նոր նախագահ Մէլին իր պաշտօնը ստանձնելով
մի ճառ ասեց, որի մէջ պնդում էր թէ՝ անհրա-
ժեշտ է վիճարանութիւնները արժանաւոր կեր-
պով և առանց կրքի առաջ տանել, և այդպիսով
բարձրացնել ազգաբնակչութեան աչքում պարա-
միտարիզմը և ապացուցանել, որ Ֆրանսիայում
դա ամենալաւ գրաւականն է ներքին հանգստու-
թեան և արտաքին խաղաղութեան համար: Պատ-
գամաւորների ժողովի և սենատի նիստերը յետա-
ձգվեցան մինչև ապրիլի 19-ը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 24-ին			
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծե.	120	ր.	50
Համբուրգի վրա 100 մարկ —	59	>	15
Փարիզի վրա 100 ֆրանկ —	47	>	55
Ոսկի — արծե.	9	>	55
Մաքսային կուպոններ —	190	>	75
Արծաթ —	1	>	42
Բորսային դիվիդենդներ —	6 1/4	և	7 1/4 0/0
Պետակ. բանկ. 5% 0/0 տոմս 1-ին շրջանի	99	>	62
— — — 2-րդ —	98	>	25
— — — 3-րդ —	98	>	—
— — — 4-րդ —	97	>	87
— — — 5-րդ —	97	>	87
— — — 6-րդ —	—	>	—
Նոր 4% 0/0 փոխառութիւն	87	>	25
Արեւելեան 5% 0/0 փոխառութիւն. 1-ին շրջ.	99	>	25
— — — 2-րդ —	98	>	62
— — — 3-րդ —	98	>	87
Ներքին 5% 0/0 առաջին փոխառութիւն.	268	>	50
— — — երկրորդ —	246	>	—
5 1/2% 0/0 ընդամ.	102	>	37
Ոսկեայ ընդամ.	198	>	75
Եթովպիայի կոնսուլդատ փոխառութիւն.	171	>	—
Նոր երկաթուղային ընդամ.	97	>	87
5% 0/0 գրաւական թղթեր կալուած.	—	>	—
— — — փոխ. կրեդ. ընդ.	170	>	—
— — — Գրաւ. թղ. Ազն. բանկի	97	>	50
5 1/2% 0/0 գրաւական թղթեր Խերսոնի կալուած.	99	>	25
— — — փոխառութիւն.	101	>	37
6% 0/0 գրաւակ. թղ. Խաբովսկի կալ. բան.	101	>	—
— — — Պոլսառայլի —	101	>	—
— — — Պետո. Տուրակ. —	101	>	—
— — — Կիւեւի —	101	>	25

